ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-21-9/15-3

ք. Երևան 12-ը հուլիսի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս **ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի**, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Գնորդ»,** մի կողմից, և **«ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Բ. Թադևոսյանի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Վաճառող»** մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

շա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***4,993,726 (չորս միլիոն ինը հարյուր իննսունինը հազար յոթ հարյուր քսանվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:*** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակների: Վճարումն իրականացվում է հանձման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ.:***

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Սույն պայմանագրի շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը**:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
ք. Երևան Բագրևանդի 5	Ք. Երևան, Արզումանյան 32-10
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01210095
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ	Ռ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկայի				
Հ/հ	**անվանումը**	**տեխնիկական բնութագիր**	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը
18.	Լուծիչ9 % NaCl Diluent (c-pack) 50մլ	9 % NaCl 50մլ քանակով, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	NACl 9% Dil, cobas c	Roche Diagnostics
23.	Միզանյութ 400 թեսթ	Լրակազմում 400 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ձևաչափ՝ 4x100 թեսթ, Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	UREA 400T cobas c 111	Roche Diagnostics
24.	Կրեատինին 400 թեսթ	Լրակազմում 400 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ձևաչափը՝ 400 թեսթ, ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 15-25C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	Creatinin Jaffe 400T c111	Roche Diagnostics
25.	Տրանսամինազա AUS 400 թեսթ	Լրակազմում 400 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ձևաչափ՝ 4x100 թեսթ : Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	AST/GOT 400T cobas c 111	Roche Diagnostics
26.	Տրանսամինազա ALS 400 թեսթ	Լրակազմում 400 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ձևաչափ՝ 4 x100 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	ALT 400T cobas c 111	Roche Diagnostics
27.	Կրեատին ֆոսֆոկինազա CK-NAK 200 թեսթ	Լրակազմում 200 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար Ձևաչափ՝ 2x100 թեսթ:Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	CK 200Tests, cobas c111	Roche Diagnostics
28.	Կրեատին ֆոսֆոկինազա CK-MB 100թեսթ	Լրակազմում 100 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար, ին-վիտրո ախտորոշման համար: Ձևաչափ՝ 2x50 թեսթ, ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 2-8C ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ	CK-MB 100Tests, cobas c111	Roche Diagnostics
34.	Թափոնի ներքին արկղ	Թափոնի ներքին արկղ Tank Waste Internal 04793951001, նախատեսված Կոբաս c111 անալիզատորի համար:	TANK WASTE INTERNAL	Roche Diagnostics
36.	Մխոցի ներդիր	Մխոցի ներդիր Seal Cap Syringe 28136815001, նախատեսված Կոբաս c111 անալիզատորի համար	SEAL CAP SYRINGE, SET OF 5	Roche Diagnostics
40.	Ֆոտոմետրի ստուգման հավաք	Ֆոտոմետրի ստուգման հավաք Roche Cardiac IQC 1 x low / 1 x high, նախատեսված Կոբաս h232 անալիզատորի: Լրակազմում 2 տեստ, Ձևաչափ՝ 1 x ցածր / 1 x բարձր, 15-25 C աստիճան ջերմային ռեժիմ	Roche Cardiac IQC (cobas)	Roche Diagnostics
44.	ՀեպատիտA Anti-HAV IgM 100 թեսթ	Լրակազմում 100 թեսթ, 2-8 C աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Anti-HAV IgM Elecsys cobas e 100	Roche Diagnostics
46.	Կյուվետների թափման արկղիկ	Գործարանային փաթեթավորումով տուփ՝ 1x14 քանակով, նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Clean liner Elecsys 2010/cobas e411 // N1	Roche Diagnostics
49.	Հեպատիտ C	Հեպատիտ C 2X25, պարունակում է նուկլեինաթթուների ամպլիֆիկացիայի արդյունավետության գնահատման ներքին ստանդարտ, նախատեսված է lightcycler անալիզատորների համար: Լրակազմում՝ 2X25 տեստ, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման ջերմաստիճանը՝ -20 ±5 °C: Նախատեսված է in-vitro ախտորոշման համար (IVD):	GeneProof	GeneProof

50.	Հեպատիտ B	Հեպատիտ B 2X25, պարունակում է նուկլեինաթթուների ամպլիֆիկացիայի արդյունավետության գնահատման ներքին ստանդարտ, նախատեսված lightcycler անալիզատորների համար: Լրակազմում՝ 2x25 տեստ, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման ջերմաստիճանը՝ -20 ±5°C: նախատեսված է in-vitro ախտորոշման համար (IVD):	GeneProof	GeneProof
52.	Քլամիդիա տրախոմատիս	Քլամիդիա տրախոմատիս 2X25, պարունակում է նուկլեինաթթուների ամպլիֆիկացիայի արդյունավետության գնահատման ներքին ստանդարտ, նախատեսված է lightcycler անալիզատորների համար: Լրակազմում՝ 2x25 տեստ, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման ջերմաստիճանը՝ -20 ±5°C: Նախատեսված է in-vitro ախտորոշման համար (IVD):	GeneProof	GeneProof
53.	Հերպես HSV(1+2)	Հերպես HSV(1+2) 2X25, պարունակում է նուկլեինաթթուների ամպլիֆիկացիայի արդյունավետության գնահատման ներքին ստանդարտ, նախատեսված է lightcycler անալիզատորների համար: Լրակազմում՝ 2x25 տեստ, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման ջերմաստիճանը՝ -20 ±5°C: Նախատեսված է in-vitro ախտորոշման համար (IVD):	GeneProof	GeneProof
54.	Միկոպլազմա պնևմոնիա	Միկոպլազմա պնևմոնիա 2X25, պարունակում է նուկլեինաթթուների ամպլիֆիկացիայի արդյունավետության գնահատման ներքին ստանդարտ, նախատեսված է LC Nano անալիզատորի համար: Լրակազմում՝ 2x25 տեստ, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման ջերմաստիճանը՝ -20 ±5°C: Նախատեսված է in-vitro ախտորոշման համար (IVD):	GeneProof	GeneProof
55.	Խլամիդիա պնեևմոնիա	Խլամիդիա պնեևմոնիա 2x25, պարունակում է նուկլեինաթթուների ամպլիֆիկացիայի արդյունավետության գնահատման ներքին ստանդարտ, նախատեսված է LC Nano անալիզատորի համար: Լրակազմում՝ 2x25 տեստ գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման ջերմաստիճանը՝ -20 ±5°C: նախատեսված է in-vitro ախտորոշման համար (IVD):	GeneProof	GeneProof

ԳՆՈՐԴ

Պաշտպանության նախարարություն
Պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ 0337548

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի							
չ/հ	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	մատակարարումը՝ 2021թ. ըստ համապատասխան եռամսյակների	
						3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2021թ.
18.	Լուծիչ9 % NaCl Diluent (c-pack) 50մլ	հատ	5	8,950	44,750	5	0
23.	Միզանյութ 400 թեսթ	լրակազմ	20	21,450	429,000	10	10
24.	Կրեատինին 400 թեսթ	լրակազմ	20	22,000	440,000	10	10
25.	Տրանսամինազա AUS 400 թեսթ	լրակազմ	24	20,900	501,600	12	12
26.	Տրանսամինազա ALS 400 թեսթ	լրակազմ	24	20,350	488,400	12	12
27.	Կրեատին ֆոսֆոկինազա CK-NAK 200 թեսթ	լրակազմ	10	36,790	367,900	5	5
28.	Կրեատին ֆոսֆոկինազա CK-MB 100թեսթ	լրակազմ	4	42,400	169,600	2	2
34.	Թափոնի ներքին արկղ	հատ	3	36,000	108,000	3	0
36.	Մխոցի ներդիր	հատ	1	11,000	11,000	1	0
40.	Ֆոտոմետրի ստուգման հավաք	լրակազմ	3	36,660	109,980	0	3
44.	ՀեպատիտA Anti-HAV IgM 100 թեսթ	լրակազմ	1	121,000	121,000	1	0
46.	Կյուվետների թափման արկղիկ	հատ	28	1,807	50,596	14	14
49.	Հեպատիտ C	լրակազմ	2	305,000	610,000	2	0
50.	Հեպատիտ B	լրակազմ	1	249,500	249,500	1	0
52.	Քլամիդիա տրախոմատիս	լրակազմ	1	304,800	304,800	1	0
53.	Հերպես HSV(1+2)	լրակազմ	1	304,800	304,800	1	0
54.	Միկոպլազմա պնևմոնիա	լրակազմ	1	304,800	304,800	1	0
55.	Խլամիդիա պնեևմոնիա	լրակազմ	1	378,000	378,000	1	0
Ընդամենը					**4,993,726**		

Ծանոթություն

Ապրանքները պետք է ունենան.

1.Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):

2.Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP, CE Mark կամ այլ):

3.Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր:

4.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:

5. Մատակարարման վայր սահմանվում է Մերիման, Արզնու խճուղի՝ կենտրոնական բժշկական բազա:

***թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ

տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱ 0337543

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-21-9/15-3 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Գնման առարկայի				
չ/հ	CPV և ապրանքի անվանումները	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ պետական բյուջեի 2021թ. հատկացումների հաշվին, ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ., ընդ որում՝	
			3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
18.	**Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր/**Լուծիչ9 % NaCl Diluent (c-pack) 50մլ/	33691167/3	44750	44750
23.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Միզանյութ 400 թեսթ/	33691423/68	214500	429000
24.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Կրեատինին 400 թեսթ/	33691423/70	220000	440000
25.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Տրանսամինազա AUS 400 թեսթ/	33691423/71	250800	501600
26.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Տրանսամինազա ALS 400 թեսթ/	33691423/72	244200	488400
27.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Կրեատին ֆոսֆոկինազա CK-NAK 200 թեսթ/	33691423/75	183950	367900
28.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Կրեատին ֆոսֆոկինազա CK-MB 100թեսթ/	33691423/76	84800	169600
34.	**Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր/**Թափոնի ներքին արկղ/	33691167/20	108000	108000
36.	**Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր/**Մխոցի ներդիր/	33691167/22	11000	11000
40.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Ֆոտոմետրի ստուգման հավաք/	33691423/94	0	109980
44.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**ՀեպատիտA Anti-HAV IgM 100 թեսթ/	33691423/153	121000	121000
46.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/**Կյուվետների թափման արկղիկ/	33691162/46	25298	50596
49.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Հեպատիտ C/	3691423/188	610000	610000
50.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Հեպատիտ B/	3691423/189	249500	249500
52.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Քլամիդիա տրախոմատիս/	33691423/190	304800	304800
53.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Հերպես HSV(1+2)/	33691423/191	304800	304800
54.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**Միկոպլազմա պնևմոնիա/	33691420/36	304800	304800
55.	**Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/**Խլամիդիա պնեևմոնիա/	33691420/37	378000	378000
Ընդամենը			**3,660,198**	**4,993,726**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԱՄ 0337548

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-21-9/15-3 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
N ԳՀԱՊՁԲ-21-9/15-3 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն